Գայանե ԹՈՎՄԱՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ-ն՝ կառավարում մասնագիտությամբ: 2014 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, 2021 թ.՝ դոցենտի գիտական կոչում:

2016 թ.-ից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի աշխատակից է:

2016 թ.-ից դասավանդում է ՀՀ ՊԿԱ-ում, 2019 թ.-ից՝ ՀՊՏՀ կառավարման ամբիոնում, 2023 թ.-ից՝ Երևանի պետական համալսարանում:

120-ից ավելի գիտական հրապարակումների, այդ թվում՝ վեց մենագրության և երեք ուսումնական ձեռնարկի հեղինակ է և համահեղինակ: Հոդվածներից 11-ը տպագրվել են Scopus և Web of Science շտեմարաններում ընդգրկված ամսագրերում:

https://orcid.org/0000-0002-4131-6322

Web of Science ResearcherID: AAH-5677-2021
Scopus Author ID: 56690085600

ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2023.2-40

Հիմնաբառեր. *թանգարան, թանգարանային զբոսաշրջություն, այցելու, արվեստի գործ, մարքեթինգ*

Թանգարանային զբոսաշրջությունը մշակութային զբոսաշրջության տարատեսակ է, որի դեպքում զբոսաշրջիկներն այցելում են թանգարաններ՝ պատմամշակութային որոշակի արժեքների և ժառանգության հետ ծանոթանալու: Թանգարանային զբոսաշրջության շուկան 2022 թ. գնահատվել է 20 մլրդ ԱՄՆ դոլար: ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալներով՝ ներկայում աշխարհում թանգարանների ընդհանուր թիվը շուրջ 104 հազար է, իսկ դրանց քանակն ամենամեծն է ԱՄՆ-ում՝ 33082: Աշխարհում լավագույնն են համարվում Լուվրը, Մետրոպոլիտեն արվեստի թանգարանը, Էրմիտաժը, Վատիկանի թանգարանները, Ուֆիցի պատկերասրահը, Օրսեի, Պրադոյի թանգարանները, Բրիտանական թանգարանը և այլն: Հոդվածում ներկայացվել են աշխարհի լավագույն, ինչպես նաև չկրկնվող և եզակի թանգարանները, թանգարանների այցելուների տեսակները, վերջին տարիներին թանգարանային զբոսաշրջության զարգացման միտումները, թանգարանների կողմից այցելու գրավելու հիմնական մարքեթինգային գործիքները: Վերլուծվել է նաև թանգարանային ոլորտը ՀՀ-ում և նշվել թանգարանային զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ քայլերը:

Թանգարանների միջազգային խորհուրդը (International council of museums (ICOM)) «թանգարան» հասկացությունը բնորոշում է հետևյալ կերպ. «Թանգարանը հասարակությանը ծառայող ոչ առևտրային հաստատություն է, որը հետազոտում, հավաքում, պահպանում, մեկնաբանում և ցուցադրում է

նյութական և ոչ նյութական ժառանգությունը: Հանրության համար բաց, հասանելի և ներառական թանգարանները խթանում են բազմազանությունն ու կայունությունը: Նրանք գործում և հաղորդակցվում են էթիկական, մասնագիտական ձևով և համայնքների մասնակցությամբ՝ առաջարկելով տարբեր փորձառություններ կրթության, ժամանցի, գիտելիքի փոխանակման համար»[1]:

Թանգարանային զբոսաշրջությունը կարելի է բնորոշել որպես զբոսաշրջիկների այցելություն թանգարաններ՝ պատմամշակութային որոշակի արժեքների և ժառանգության հետ ծանոթանալու նպատակով:

Թանգարանային զբոսաշրջությունը մշակութային զբոսաշրջության տարատեսակ է:

Թանգարանային զբոսաշրջության շուկան 2022 թ. գնահատվել է 20 մլրդ ԱՄՆ դոլար, և կանխատեսվում է, որ 2032 թ. կհասնի մինչև 35 մլրդ ԱՄՆ դոլարի՝ տարեկան աճելով 13 տոկոսով:

Համաշխարհային թանգարանային զբոսաշրջության շուկայում առաջատար են հետևյալ թանգարանները՝ Լուվր, Չինաստանի ազգային թանգարան, Ռուսական թանգարան, Լոնդոնի գիտության թանգարան, Շանհայի թանգարան, Վատիկանի թանգարաններ, Պրադոյի թանգարան և այլն[2]:

Թանգարաններն այսօր զբոսաշրջության արդյունաբերության հիմնական մասն են: Զբոսաշրջիկներից շատերի այցելության հիմնական նպատակը հենց թանգարաններ այցելելն է:

Աշխարհի լավագույն թանգարաններից են[3].

1. ***Փարիզի Լուվրի թանգարանը*** (Louvre Museum), որտեղ պահվում է 38000-ից ավելի արվեստի գործ: Գլուխգործոցներից է Լեոնարդո դա Վինչիի «Մոնա Լիզան»: Հիմնադրվել է 1793 թ., տարածքը 72735 քառակուսի մետր է, պատկերասրահների թիվը՝ 100: Մեկ անձի մուտքավճարը 17 եվրո է[4]:

2. ***Նյու Յորքի Մետրոպոլիտեն արվեստի թանգարանը*** (Metropolitan Museum of Art (MET)), որը ներառում է 2 մլն արվեստի գործ: Գլուխգործոցներից է Ժակ Լուի Դավիդի «Սոկրատեսի մահը» նկարը: Հիմնադրվել է 1872 թ., տարածքը 58820 քառակուսի մետր է, պատկերասրահների թիվը՝ 280: Մեկ անձի մուտքավճարը տատանվում է 17-30 դոլարի սահմաններում[5]:
3. ***Սանկտ Պետերբուրգի Էրմիտաժ թանգարանը*** (Hermitage Museum), որտեղ ցուցադրվում է 60000-ից ավելի արվեստի գործ: Հիմնադրվել է 1764 թ., տարածքը 66842 քառակուսի մետր է,

[1] Museum Definition, https://icom.museum/en/resources/standards-guidelines/museum-definition/
[2] Museums Tourism Market Outlook (2022-2032), https://www.futuremarketinsights.com/reports/museum-tourism-sector-overview
[3] Այս դասակարգման մեթոդաբանության հիմքում հետևյալ հինգ չափանիշներն են, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 1-10 միավորով՝ արվեստի հետաքրքիր գործեր, արվեստի հայտնի գործեր, արվեստի ցուցադրություն, շինություն, չափեր:
60 Best Museums in the World, https://worldcitiesranking.com/best-museums-in-the-world/,
Methodology For Our List of the Best Museums, https://worldcitiesranking.com/methodology-criteria-museums/
[4] Louvre Museum, https://www.ticketlouvre.fr/louvre/b2c/index.cfm/calendar/eventCode/MusWeb
[5] Admission Tickets, https://engage.metmuseum.org/admission/?promocode=48946

պատկերասրահների թիվը՝ 350: Մեկ անձի մուտքի վճարը 500 ռուբլի է[6]: Արվեստի գլուխգործոցներից է Լեոնարդո դա Վինչիի «Մադոննա Լիտան» (Madonna Litta): Այստեղ ցուցադրվում են նաև Ռեմբրանդտի, Միքելանջելոյի գործերից:



4. ***Վատիկանի թանգարանները*** (Musei Vaticani), որտեղ 20000-ից ավելի արվեստի գործ է ցուցադրվում: Հիմնադրվել են 1506 թ., տարածքը 43000 քառակուսի մետր է, ունեն 54 պատկերասրահ: Մեկ անձի մուտքավճարը 17 եվրո է[7]: Արվեստի գլուխգործոցներից են Ռաֆայելի «Աթենքի դպրոցը» նկարը, Սիքստինյան կապելլան:
5. ***Ուֆիցի պատկերասրահը Ֆլորենցիայում*** (Galleria Degli Uffizi), որտեղ 38000-ից ավելի արվեստի գործ է ցուցադրվում: Հիմնադրվել է 1581 թ., տարածքը 8000 քառակուսի մետր է, ունի 45 պատկերասրահ: Մեկ անձի մուտքավճարը 12 և 25 եվրո է՝ կախված տարվա ժամանակահատվածից[8]: Արվեստի գլուխգործոցներից է Սանդրո Բոտիչելիի «Վեներայի ծնունդը» նկարը:

6. ***Օրսեի թանգարանը Փարիզում*** (Musée d'Orsay), որտեղ 4000-ից ավելի արվեստի գործ է ցուցադրվում: Հիմնադրվել է 1986 թ., տարածքը 16853 քառակուսի մետր է, ունի 72 պատկերասրահ: Մեկ անձի մուտքավճարը 16 եվրո է[9]: Արվեստի գլուխգործոցներից է Պիեռ Օգյուստ Ռենուարի «Պարահանդես Մուլեն դը լա Գալետ» նկարը: Այստեղ ցուցադրվում են նաև Վան Գոգի, Էդուարդ Մանեի գործերը:



7. ***Լոնդոնի Բրիտանական թանգարանը*** (British Museum), որտեղ 80000-ից ավե-

[6] Purchase of Online Tickets, https://www.hermitagemuseum.org/wps/portal/hermitage/tickets
[7] Biglietti di ingresso - Musei Vaticani e Cappella Sistina, https://tickets.museivaticani.va/home/fromtag/1/1675800000000/Biglietti-Musei
[8] Official tickets fares of the Uffizi Galleries, https://www.uffizi.it/en/pages/tickets-fares
[9] Admission to the Musée d'Orsay, https://billetterie.musee-orsay.fr/en-GB/products?famille=1933737738230400130

լի արվեստի գործ է ցուցադրվում: Հիմնադրվել է 1753 թ., տարածքը 25000 քառակուսի մետր է, ունի 94 պատկերասրահ: Մուտքն անվճար է[10]: Արվեստի գլուխգործոցներից է «Պարթենոնի քանդակները կամ Էլգինի մարմարները»:

8. ***Մադրիդի Պրադոյի թանգարանը*** (Museo del Prado), որտեղ 1500-ից ավելի արվեստի գործ է ցուցադրվում: Հիմնադրվել է 1819 թ., տարածքը 15400 քառակուսի մետր է, ունի 105 պատկերասրահ: Մուտքավճարը 15 եվրո է[11]: Արվեստի գլուխգործոցներից է Հիերոնիմոս Բոսխի «Երկրային վայելքների այգի» նկարը: Այստեղ ցուցադրվում են նաև Գոյայի, Էլ Գրեկոյի, Վելասկեսի, Ռաֆայելի, Ռուբենսի, Ռեմբրանդտի և այլոց գործերը:

9. ***Լոնդոնի Ազգային պատկերասրահը*** (National Gallery), որտեղ ցուցադրվում է 2300-ից ավելի արվեստի գործ: Հիմնադրվել է 1824 թ., տարածքը 13000 քառակուսի մետր է, պատկերասրահների թիվը՝ 72: Մուտքն անվճար է[12]: Արվեստի գլուխգործոցներից է Յան Վան Էյկի «Առնոլֆինի ամուսինների դիմանկարը»: Այստեղ ցուցադրվում են նաև Վան Գոգի, Դա Վինչիի, Ռուբենսի, Վելասկեսի և այլոց կտավները:

10. ***Կահիրեի Եգիպտական թանգարանը*** (Egyptian Museum), որտեղ 150000-ից ավելի արվեստի գործ է ցուցադրվում: Հիմնադրվել է 1902 թ., տարածքը 15000 քառակուսի մետր է, ունի 89 պատկերասրահ: Մուտքի վճարը տեղաբնակների համար մոտ 1, իսկ օտարերկրացիների համար՝ 7 ԱՄՆ դոլար է[13]: Արվեստի գլուխգործոցներից է Թութանհամոնի թաղման ոսկե դիմակը:

Հայտնի են նաև Վան Գոգի թանգարանն Ամստերդամում, Աթենքի Ազգային հնագիտական և Ակրոպոլիսի թանգարանները, Հռոմի Բորգեզե պատկերասրահը, Ֆլորենցիայի Պիտտիի թանգարանը և Ակադեմիայի պատկերասրահը (Galleria dell'Accademia), որտեղ ցուցադրված է Միքելանջելոյի «Դավիթը», Մադրիդի Տիսեն-Բորնեմիսա (Thyssen-Bornemisza) և Ռեյնա Սոֆիա թանգարանները, Նյու Յորքի Գուգենհեյմ (Guggenheim) թանգարանը, Ավստրիայի Բելվեդերի պատկերասրահը, որտեղ ցուցադրված է Գուստավ Կլիմտի «Համբույրը» կտավը, Լիսաբոնի «Գալուստ Գյուլբենկյան» թանգարանը, Պիկասոյի թանգարանը Բարսելոնում և այլն:

Զբոսաշրջիկների համար ոչ պակաս գրավիչ են նաև Մադամ Տյուսոյի մոմե

[10] British Museum, https://www.britishmuseum.org/
[11] Welcome to the Museo del Prado, https://www.museodelprado.es/en/visit-the-museum
[12] National Gallery of Art, https://www.nga.gov/visit.html
[13] The Egyptian Museum, https://egymonuments.gov.eg/en/museums/egyptian-museum

արձանների թանգարաններն աշխարհի տարբեր երկրներում: Ներկայում աշխարհի 25 քաղաքում կան Մադամ Տյուսոյի թանգարաններ[14]:

Զբոսաշրջիկների կողմից սիրված թանգարաններից են նաև Շոկոլադի թանգարանը Բարսելոնում, Դինոզավրերի թանգարանը Պորտուգալիայի Լոուրինյա քաղաքում, Տարազների թանգարանը Պորտուգալիայի Վիանա դո Կաստելո քաղաքում, Վիմեյրոյի ճակատամարտի ցուցադրության սրահը Պորտուգալիայի Վիմեյրո համայնքում և այլն:

Զբոսաշրջիկներ շատ են այցելում նաև տարբեր երկրների թագավորական պալատներ, օրինակ՝ Լոնդոնի Բուքինգհեմյան պալատ, Մադրիդի թագավորական պալատ, Տոկիոյի կայսերական պալատ, Ֆրանսիայի Վերսալի պալատ, Վիեննայի Շյոնբրունի ու Հոֆբուրգի պալատներ և այլն:

Շատ զբոսաշրջիկներ սիրում են շրջայց կատարել այն թանգարաններում, որոնք եզակի են, չկրկնվող[15]: Դրանցից են.

1. ***Կանկունի ստորջրյա թանգարանը Մեքսիկայում***[16], որտեղ պահվում է 500-ից ավելի քանդակ: Այցելուների թիվը տարեկան 750 000-ից ավելի է:
2. ***Micropia կամ Ամստերդամի մանրէների թանգարանը***, որտեղ ցուցանմուշները բաժանված են հիմնականում խմորման, վիրուսների և պատվաստանյութերի ենթախմբերի: Նշանավոր ցուցանմուշներից մեկը կոչվում է «Բերանից բերան»[17] և պատմում է, թե



որքան մանրէներ են փոխանցվում, երբ մարդիկ համբուրվում են:
3. ***Վաշինգտոնի Լրտեսների միջազգային թանգարանը*** (International Spy Museum)[18], որը ներկայացնում է լրտեսության և հետախուզության աշխարհը: Ունենալով լրտեսական արտեֆակտների (արվեստի կամ արհեստի փաստերի) ամենամեծ հավաքածուն՝ ցուցանմուշները բաժանված են տարբեր կատեգորիաների, ներառյալ ինտերակտիվ ցուցահանդեսը, որը կոչվում է Operation Spy, որտեղ մարդիկ կարող են ստանձնել գաղտնի գործակալների դերեր և մասնակցել մեկ ժամ տևող լրտեսական միջոցառման: Ցուցադրված ուշագրավ արտեֆակտներից են շրթներկ ատրճանակը, որը նաև հայտնի է որպես «մահվան համբույր», որն օգտագործել են «ԿԳԲ»-ում աշխատող կանայք՝ սառը պատերազմի ժամանակ, Minox լրտեսական տեսախցիկը և Aston Martin DB5-ը, որը հայտնվել է 1964 թվականին Ջեյմս Բոնդի թրիլերում՝ Goldfinger-ում:



[14] Madame Tussauds, https://www.madametussauds.com/
[15] 10 of the Most Unique Museums Around the World, https://www.tatlerasia.com/lifestyle/travel/hk-unique-museums-around-the-world
[16] Museo Subacuatico de Arte, https://musamexico.org/
[17] Mouth to mouth, https://www.micropia.nl/en/discover/stories/mouth-mouth/
[18] Spy Museum, https://www.spymuseum.org/?_ga=2.159543096.486771450.1675072882-830071564.1675072882

4. ***Մումիայի թանգարանը Մեքսիկայում*** (Museo de las Momias de Guanajuato)[19], որը մումիաների տունն է: Քանի որ ցուցանմուշները բնական կերպով են մումիա դարձել, նրանք մի փոքր ավելի մռայլ տեսք ունեն, քան Եգիպտոսում պեղվածները: Մումիաների ստեղծման գործընթացը, հավանաբար, տարածքի բարձրության և չոր կլիմայի համակցության արդյունք է, երբ փայտե դագաղները հագեցվել են խոնավությամբ: Կրիպտները նաև կնքված են եղել ցեմենտով, որը մարմինները պաշտպանել է քայքայումից: Քանի որ այդ վայրում հայտնաբերված մեծ թվով մումիաները սկսեցին ժողովրդականություն վայելել, ստեղծվեց թանգարան՝ դրանք լայն հանրությանը ցուցադրելու համար: Թանգարանում տեղ են գտել ավելի քան հարյուր մումիաներ, որոնց մեծ մասը Գուանախուատոյի բնակիչ է եղել 1850-1950 թվականներին: Այստեղ է պահվում նաև աշխարհի ամենափոքր մումիան:

5. ***Միացյալ Թագավորությունում գտնըվող Շան վզկապների*** (Dog Collar)[20] թանգարանը պարտադիր այցելության վայր է շների սիրահարների համար: Լիդսի ամրոցի ախոռում տեղակայված հավաքածուն իր տեսակի մեջ միակն է աշխարհում և ցուցադրվում է 1976 թվականից: Հավաքածուում տեղ են գտել 130 հազվագյուտ և արժեքավոր վզկապներ, որոնցից ամենահինը թվագրվում է 15-րդ դարի վերջ ժամանակաշրջանով:

6. ***Գերմանիայում Հացի մշակույթի թանգարանը*** (The Museum of Bread Culture)[21] հիմնադրվել է 1955 թվականին և նպատակ ունի ցուցադրելու հացի 6000-ամյա պատմությունը՝ որպես մարդկային մշակույթի և քաղաքակրթության անփոխարինելի մաս: Թանգարանի առաջին մշտական ցուցադրությունը թվագրվում է 1960 թվական ժամանակաշրջանով և իր տեսակի մեջ առաջին է աշխարհում: Այստեղ են պահվում ավելի քան 18000 առարկաներ, որոնցից 700-ը՝ մշտական ցուցադրության: Ցուցանմուշները հնարավորություն են տալիս ընդգծելու հացի կարևորությունը հասարակության կյանքում: Դրանք նաև ցույց են տալիս հացի պատրաստման տարբեր մեթոդներ, և թե ինչպես են դրանք զարգացել դարերի ընթացքում: Չնայած դրան՝ իրական հացը ցուցահանդեսի մաս չէ, քանի որ հիմնադիրները կարծում են, որ հացն արվեստի կամ արհեստի փաստ (արտեֆակտ) չէ, այլ ուտելիք, որը պետք է ամեն օր թարմ թխել:

[19] Museo de las Momias de Guanajuato, http://www.momiasdeguanajuato.gob.mx/index.html
[20] The Dog Collar museum, https://leeds-castle.com/attraction/dog-collar-museum/
[21] The Museum of Bread Culture, https://museumbrotundkunst.de/en

7. ***Ոսկու թանգարանը Կոլումբիայում***[22] տեղի ամենահայտնի զբոսաշրջային վայրն է, որը տարեկան գրավում է կես միլիոն այցելու: Թանգարանն ունի ավելի քան 55,000 կտոր ոսկի և այլ իրեր Կոլումբիայի նախահիսպանական մշակույթից:

Ոսկին, իհարկե, ցուցանմուշների մեծ մասն է, սակայն հավաքածուում առկա են նաև խեցեղեն, քարե, փայտե և տեքստիլ առարկաներ: Թանգարանի ամենահայտնի ցուցանմուշը Musica Raft-ն է՝ կապված Էլ Դորադոյի լեգենդի հետ, որը, մարդկանց կարծիքով, վերաբերում էր առասպելական ոսկի քաղաքին, բայց իրականում նվիրված էր մուիսկա ժողովրդի ցեղապետին, որը ոչ պաշտոնապես կոչվում է Ոսկե մարդ:

8. ***Շվեյցարիայի Լինդտ շոկոլադի տուն*** (Lindt Home of Chocolate)[23] թանգարանում է գտնվում Լինդտ շոկոլադի ամենամեծ խանութը: Թանգարանն ունի տպավորիչ՝ ինը մետր բարձրությամբ Լինդտ շոկոլադե հիմք, որի միջով հոսում է 1500 կիլոգրամ շոկոլադ: Գործում են նաև ինտերակտիվ շոկոլադե տուրեր, որոնք ներկայացնում են շվեյցարական շոկոլադը՝ որպես մշակութային ժառանգություն: Այստեղ այցելուները կարող են փորձել և ստեղծել իրենց սեփական շոկոլադը՝ Լինդտի վարպետ շոկոլադագործների հետ միասին:

9. ***Ճապոնիայի Լապշաների բաժակների թանգարանն Օսակայում*** (Cup Noodles Museum)[24]: Մի ամբողջ տարի ուսումնասիրելուց հետո Օսակայի իր տան բակում Մոմոֆուկու Անդոն 1958 թվականին հորինեց առաջին ակնթարթային լապշան (հավի ռամեն): Այդ ժամանակից ի վեր գավաթային լապշան հայտնի դարձավ ամբողջ աշխարհում: Թանգարանի այցելուները կարող են ստեղծել իրենց սեփական գավաթային լապշան: Ակնթարթային լապշաների գունեղ ցուցահանդեսը ցույց է տալիս, թե արտադրանքը որքան տարածված է աշխարհում:

10. ***Խզված հարաբերությունների թանգարանը*** (The Museum of Broken Relationships)[25] Խորվաթիայում: Այս

[22] El Museo del Oro, https://www.banrepcultural.org/bogota/museo-del-oro
[23] Lindt Home of Chocolate, https://www.lindt-home-of-chocolate.com/en/
[24] Cup Noodles Museum, https://www.cupnoodles-museum.jp/en/osaka_ikeda/
[25] The Museum of Broken Relationships, https://brokenships.com/explore

թանգարանը նվիրված է անհաջող սիրային հարաբերություններին: Ցուցանմուշները հիմնականում նախկին սիրահարների անձնական իրերն են՝ կարճ նկարագրությամբ, երբեմն ներկայացված է նաև իրի պատմությունը: Թանգարանի գաղափարի հեղինակը Զագրեբում բնակվող մի զույգ է՝ Օլինկա Վիշտիցան և Դրաժեն Գրուբիշիչը, որոնք սկզբում կատակել են, որ կստեղծեն թանգարան՝ բաժանումից հետո իրենց անձնական իրերը պահելու համար՝ որպես համատեղ կյանքը հիշելու և հարգելու միջոց, և կատակը, ի վերջո, իրականություն է դարձել:

Ամբողջ աշխարհում վերջին տարիներին թանգարաններ այցելությունների թիվը կրճատվել է COVID-19 համավարակի պատճառով: 2021 թ. ամենաշատ այցելու ունեցել է Լուվրը՝ 2.83 մլն մարդ (աղյուսակ 1):

2021 թվականին աշխարհի լավագույն 100 թանգարաններն ընդհանուր առմամբ ունեցել են 71 միլիոն այցելու՝ 2020 թվականի 54 միլիոնի դիմաց: 2021 թ. գրանցվել է այցելուների 31 տոկոս աճ, թեև ընդհանուր թիվը դեռևս 69 տոկոսով ցածր էր, քան 2019 թ.-ին, երբ 100 լավագույն թանգարաններն ընդունել էին 230 միլիոն այցելու[26]:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալներով ներկայում աշխարհում թանգարանների ընդհանուր գնահատված թիվը շուրջ 104 հազար է: Միացյալ Նահանգներն աշխարհում գերակայում է թանգարանների թվով. 33082 թանգարան՝ 2021 թվականի մարտի դրությամբ: Ցուցակում հաջորդում են Գերմանիան և Ճապոնիան, համապատասխանաբար՝ 6741 և 5738 թանգարան, այնուհետև Չինաստանը՝ 5535, ՌԴ-ն՝ 5415, Ֆրանսիան՝ 4811, Բրազիլիան՝ 3906, Իտալիան՝ 3906, ՄԹ-ն և Հյուսիսային Իռլանդիան՝ 3183, Կանադան՝ 2245 և Իսպանիան՝ 1732 թանգարաններով[27]:

2022 թ. Լուվրն ընդունել է 7.8 մլն այցելու՝ 170 տոկոսով ավելի, քան 2021 թ.: Այցելուների 30 տոկոսը ֆրանսիացի է, 70 տոկոսը՝ օտարերկրացի: Այցելուների 45 տոկոսը եղել է մինչև 25 տարեկան: Այցելուների 60 տոկոսը Լուվր է այցելել առաջին անգամ[28]:

Օրվա կտրվածքով Լուվրն ունենում է շուրջ 30000 այցելու, Բրիտանական թանգարանը՝ 6000, Մետրոպոլիտեն արվեստի թանգարանը՝ 5000[29]:

Ջոն Ֆոլքն իր «Identity and the Muse-

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Աշխարհի ամենաշատ այցելվող թանգարանները, 2019-2021 թթ.[30] *(միլիոն մարդ)*

Թանգարաններ	2019	2020	2021
Լուվր, Փարիզ	9.6	2.7	2.83
Չինաստանի ազգային թանգարան, Պեկին	7.39	1.6	2.38
Շանհայի գիտության և տեխնիկայի թանգարան, Շանհայ	4.82	1.35	2.37
Չինաստանի գիտական տեխնոլոգիաների թանգարան, Պեկին	3.89	0.69	2.36
Նանջինգի թանգարան, Նանջինգ	4.17	1.52	2.03
Մետրոպոլիտեն արվեստի թանգարան, Նյու Յորք	6.77	1.13	1.96
Արվեստի ազգային պատկերասրահ, Վաշինգտոն	4.07	0.73	1.71
Էրմիտաժ թանգարան, Սանկտ Պետերբուրգ	4.96	0.97	1.65
Ռեյնա Սոֆիա, Մադրիդ	4.43	1.25	1.64
Վատիկանի թանգարաններ, Վատիկան	6.88	1.3	1.61
Ազգային պատմության թանգարան, Լոնդոն	5.42	1.2	1.56
Բրիտանական թանգարան, Լոնդոն	6.21	1.28	1.33

[26] Museum sector enjoyed growing numbers of visitors in 2021, https://blooloop.com/museum/news/museum-sector-covid-attendance-recovery-2021/
[27] Leading countries worldwide with the highest number of museums 2021, https://www.statista.com/statistics/1201825/top-countries-by-number-of-museums-worldwide/
[28] 7.8 million visitors to the Musée du Louvre in 2022, https://presse.louvre.fr/7-8-million-visitors-to-the-musee-du-louvre-in-2022/
[29] How many visitors do museums get daily?, https://www.arnabontempsmuseum.com/how-many-visitors-do-museums-get-daily-2/
[30] Leading museums by highest attendance worldwide 2019-2021, https://www.statista.com/statistics/901072/museums-by-total-attendance-worldwide/

um Visitor Experience» աշխատության մեջ թանգարանների այցելուներին բաժանել է հետևյալ խմբերի.

1. *Հետազոտողներ (Explorers)*, որոնք անչափ հետաքրքրված են թանգարանով: Նրանք ակնկալում են գտնել մի բան, որը կգրավի իրենց ուշադրությունը, և որի արդյունքում իրենք նոր բան կսովորեն:

2. *Օժանդակողներ (Facilitators),* որոնք ունեն սոցիալական շահամիտվածություն: Նրանց այցի հիմնական նպատակն իրենց ուղեկցող սոցիալական խմբին նոր բան սովորելու հնարավորություն ընձեռելն է:

3. *Պրոֆեսիոնալներ/հոբբիստներ (Professional/Hobbyists),* որոնք սերտ կապ են զգում թանգարանի բովանդակության և իրենց մասնագիտության կամ հոբբիի միջև: Նրանց այցելության հիմքում որևէ որոշակի նպատակի իրագործումն է:

4. *Փորձառություն փնտրողներ (Experience Seekers),* որոնք թանգարանն ընկալում են որպես կարևոր նպատակակետ: Նրանց բավարարվածությունը, առաջին հերթին, բխում է զուտ այն փաստից, որ իրենք «եղել են այդտեղ և արել դա»:

5. *Վերալիցքավորվողներ (Rechargers),* որոնք հիմնականում ձգտում են ունենալ հոգևոր և/կամ վերականգնողական փորձառություն: Նրանք թանգարանը տեսնում են որպես ապաստան՝ աշխատանքային աշխարհից կտրվելու համար, որպես մի վայր, որտեղ կարող են լիցքաթափվել՝ շրջապատված լինելով ոգեշնչող և գեղեցիկ իրերով[31]:

Ջոն Ֆոլքը մշակել է նաև հարցաթերթ, որը լրացնելով՝ կարող եք պարզել, թե վերոնշյալ խմբերից որին եք պատկանում Դուք[32]:

Այցելուների ժողովրդագրական պատկերը տարբերվում է ըստ թանգարանների: Օրինակ, համաձայն որոշ հետազոտությունների, ԱՄՆ-ում վերջիններիս միջին տարիքը 47 է, և մեծամասնությունը կանայք են[33]: Մեծ Բրիտանիայում 105 տարբեր թանգարանների 39318 այցելուների շրջանում կատարված հարցումները վկայում են, որ նրանց 10 տոկոսը 16-24 տարիքային խմբում են, 16 տոկոսը՝ 25-34, 18 տոկոսը՝ 35-44, 15 տոկոսը՝ 45-54, 18 տոկոսը՝ 55-64 և 23 տոկոսը՝ 65-ից բարձր[34]:

Շատ թանգարաններ, օրինակ՝ Լուվրը[35], Լոնդոնի Բրիտանական թանգարանը, Նյու Յորքի Գուգգենհեյմը, Վաշինգտոնի Արվեստի ազգային պատկերասրահը, Փարիզի Օրսեի թանգարանը, Ամստերդամի Վան Գոգի թանգարանը և այլն[36], ունեն նաև վիրտուալ տուրեր, որոնց պահանջարկն աճեց COVID-19 համավարակի ժամանակ[37]:

Թանգարաններն այցելու գրավելու համար կատարում են տարբեր մարքեթինգային քայլեր.

- Սոցիալական մեդիայի օգտագործում, երբ թանգարանը տեղադրում է նյութեր, նկարներ, ինչպես նաև այցելուներին խրախուսում ներբեռնել նկարներ, ինչը խթանում է «բերանացի» մարքեթինգը և օգնում նոր լսարաններ գրավել:
- Թվային մարքեթինգի կիրառում, որի հիմնական քայլերից են email մարքեթինգը, content մարքեթինգը, որոնման համակարգի օպտիմալացումը:
- Կայքէջի բարելավում: Կայքէջը պետք է կցված լինի թանգարանի սոցիալական մեդիայի էջին և պարունակի տեղեկություններ մուտքավճարի, աշխատանքային ժամերի, առկա միջոցառումների, ցուցահանդեսների, գտնվելու վայրի և տվյալ վայր հասնելու ուղիների և այլնի վերաբերյալ: Կայքը պետք է լինի գրավիչ՝ արտացոլելով թանգարանի հիմնական ռեսուրսները:

[31] Falk, J.H. (2016). Museum Audiences: A Visitor-Centered Perspective, Loisir et Société/Leisure and Society, 39(3), 357-370, https://www.instituteforlearninginnovation.org/wp-content/uploads/2019/10/Falk-Museum-Audiences.pdf

[32] Identity and the Museum Visitor Experience, https://jewishmuseummd.org/intern-weekly-response-identity-and-the-museum-visitor-experience/

[33] How many visitors do museums get daily?, https://www.arnabontempsmuseum.com/how-many-visitors-do-museums-get-daily-2/

[34] Museums Audience Report, 2018, pp. 1-16, https://www.theaudienceagency.org/asset/1995

[35] Virtual tours, Enjoy the Louvre at home!, https://www.louvre.fr/en/online-tours#virtual-tours

[36] Romano A., These 12 Famous Museums Offer Virtual Tours You Can Take on Your Couch, https://www.travelandleisure.com/attractions/museums-galleries/museums-with-virtual-tours

[37] Թովմասյան Գ., Վիրտուալ զբոսաշրջություն. ճանապարհորդիր՝ տանը նստած, «Ամբերդ» տեղեկագիր, 2022/3, էջ 136-143, DOI: 10.52174/2579-2989_2022.3-136:

- Ինչ-որ նոր բան անել, և դա տարածել email մարքեթինգի ու սոցիալական մեդիայի միջոցով: Կարելի է ցուցադրել վիրտուալ տուրեր կամ ինտերակտիվ խաղեր՝ այցելուներ գրավելու համար:
- Անդամակցության ծրագիր ունենալ: Այսպիսի ծրագրերը կիրառվում են՝ մշտական այցելուներին խրախուսելու և օգուտներ տրամադրելու համար: Անդամակցության ծրագրերը, սովորաբար, ներառում են անվճար կամ զեղչված մուտք, ցուցահանդեսների վաղաժամ մուտք և այլ արտոնություններ: Որոշ թանգարաններ ունեն անդամակցության ծրագրեր, որոնք առաջարկում են զեղչեր և արտոնություններ ոչ միայն իրենց թանգարանում, այլև գործընկեր այլ հաստատություններում, ինչպիսիք են տեղական թատրոնները կամ այլ թանգարաններ:
- Զեղչեր առաջարկել: Զեղչերը կարող են առաջարկվել գործող և հնարավոր հաճախորդներին, ինչպես նաև անդամակցության ծրագրերը խթանելու համար: Մշտական գործող զեղչերը վերաբերում են ուսանողներին, երեխաներին, խմբային այցելություններին, թոշակառուներին և այլն: Կիրառվում է նաև գնային տարբերակման քաղաքականություն՝ ըստ սեզոնի, շաբաթվա օրերի և ժամերի:
- Եզակի միջոցառումների անցկացում: Միջոցառումները նոր մարդկանց գրավելու հիանալի միջոց են: Թանգարանը կարող է կազմակերպել տարբեր տեսակի միջոցառումներ՝ սկսած կոկտեյլային երեկոներից և փառատոներից մինչև գիտական դասախոսություններ և գրքերի մասին զրույցներ: Միջոցառումներն օգնում են կապ հաստատել ողջ հասարակության հետ: Յուրաքանչյուր միջոցառում կարող է գրավել հասարակության տարբեր հատվածներին՝ ընդլայնելով թանգարանի հասանելիությունը: Թանգարանը կարող է ինքնուրույն կամ այլ հաստատությունների հետ համագործակցությամբ կազմակերպել հետևյալ միջոցառումները՝ կոկտեյլային երեկո, որը ներառում է պատմություն խմիչքների մասին, ուսուցողական պատմություններ երեխաների համար, արվեստի պատմության դասախոսություն, պարզապես խնջույք՝ հասարակությանը համախմբելու համար, նկարչության դաս դեռահասների համար, հանդիպում հայտնի հեղինակի հետ և այլն:
- Ինֆլյուենսերների ներգրավում: Վերջիններս կարող են օգնել ավելացնել թանգարանի այցելուների թիվը: Ինֆլյունեսերների ընտրությունը կախված է այն հանգամանքից, թե այցելուների ինչ խումբ է ուզում գրավել թանգարանը: Օրինակ՝ եթե ցանկանում է գրավել զբոսաշրջիկների, ուրեմն, որպես ինֆլյուենսեր, կարող է դիմել ճամփորդական բլոգերի օգնությանը:
- Գրավել բազմաթիվ ակնդիրների: Սոցիալական մեդիայի օգտագործումն օգնում է գրավել երիտասարդներին և դեռահասներին: Թվային գովազդը և լավ մշակված կայքը «հասնում» են ավելի լայն լսարանի: Անդամակցության ծրագրերն ու զեղչերը գրավում են մեծահասակներին և ընտանիքներին: Միջոցառումները կարող են նախատեսված լինել յուրաքանչյուր լսարանի, նույնիսկ երեխաներին գրավելու համար, և ինֆլյուենսերները կարող են օգնել լրիվ նոր այցելուների ներգրավմանը:
- Ավելացնել խաղահրապարակներ: Սա շատ օգտակար է այն ընտանիքների համար, որոնք փոքր երեխաներ ունեն: Երեխաները կարող են մասնակցել տարբեր միջոցառումների, խաղերի և ինչ-որ նոր բան սովորել խաղի միջոցով: Խաղահրապարակները նպաստում են, որ մարդիկ, այս դեպքում՝ ծնողները, ավելի երկար ժամանակ մնան թանգարանում և հանգստանան: Խաղահրապարակները նպաստում են նաև «բերանացի» մարքեթինգի խթանմանը և կրկնական այցերի ավելացմանը[38]:

[38] 10 tips to increase visitors to your museum, https://www.softplay.com/blog/10-tips-to-increase-visitors-to-your-museum/

ՀՀ թանգարանները:

2021 թ. դրությամբ ՀՀ-ում եղել է 100 թանգարան, որից 63-ը՝ Երևանում[39]:

Թանգարանների ֆոնդերում հաշվառվել է 3157.5 հազ. ցուցանմուշ, որի 92.4%-ը՝ Երևանում (աղյուսակ 3):

Թանգարանների հիմնական ֆոնդերում գերակշռում են փաստաթղթերը, լուսանկարները, հնագիտական առարկաները (աղյուսակ 4):

Թանգարանների այցելուների թվաքանակը 2021 թ. կազմել է 2402317 մարդ, որից շուրջ 88%-ը՝ Երևանում (աղյուսակ 5):

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Թանգարանների քանակն ըստ ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և ըստ բնույթի, 2021 թ., միավոր[40]

Վայրը	Ընդամենը	Այդ թվում՝ ըստ բնույթի				
		Պատմական	Երկրագիտական	Հուշային	Գրականության և արվեստի	Այլ
ք. Երևան	63	21	1	9	31	1
Արագածոտն	1	-	-	1	-	-
Արարատ	2	-	-	1	1	-
Արմավիր	3	2	-	1	-	-
Գեղարքունիք	2	-	2	-	-	-
Լոռի	8	4	1	2	1	-
Կոտայք	5	2	1	1	1	-
Շիրակ	8	1	1	6	-	-
Սյունիք	4	2	2	-	-	-
Վայոց ձոր	1	-	1	-	-	-
Տավուշ	3	2	1	-	-	-
Ընդամենը՝ ՀՀ	**100**	**34**	**10**	**21**	**34**	**1**

ԱՂՅՈՒՍԱԿ 3

Թանգարանների ֆոնդերի քանակն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2021 թ., միավոր[41]

Վայրը	Հիմնական ֆոնդերի քանակը	Դրանցից ցուցադրվել են հաշվեարու տարում					Գիտական մշակում անցած նմուշների քանակը	Վերականգնման ենթակա նմուշների քանակը	Վերականգնված նմուշների քանակը
		ընդամենը	այդ թվում՝						
			մշտական	ժամանակավոր	այլ նպատակներով	թանգարանից դուրս			
ք. Երևան	2917405	83994	49603	15452	17216	1723	534740	53288	6665
Արագածոտն	3022	674	674	-	-	-	-	5	-
Արարատ	1374	1099	1081	18	-	-	453	32	-
Արմավիր	101023	17317	8443	8845	-	29	225	3795	57
Գեղարքունիք	10009	2674	2396	206	-	72	618	21	-
Լոռի	44770	4267	3340	776	2	149	3276	2726	50
Կոտայք	7908	2049	1869	180	-	-	7056	193	47
Շիրակ	35032	7191	6652	399	140	-	20168	5509	174
Սյունիք	20236	4343	3928	355	-	60	6359	1851	183
Վայոց ձոր	9592	508	448	60	-	-	152	139	16
Տավուշ	7175	2780	2010	765	-	5	726	146	10
Ընդամենը՝ ՀՀ	***3157546***	***126896***	***80444***	***27056***	***17358***	***2038***	***573773***	***67705***	***7202***

[39] ՀՀ սոցիալական վիճակը 2021 թ., էջ 288, https://armstat.am/file/article/soc_sit_2021_24.pdf
[40] Նույն տեղում:
[41] Նույն տեղում, էջ 289, https://armstat.am/file/article/soc_sit_2021_24.pdf

ԱՂՅՈՒՍԱԿ 4

Թանգարանների ֆոնդերի քանակն ըստ ցուցանմուշների և ըստ տարիների, 2017-2021 թթ., միավոր[42]

Ցուցանմուշներ	2017	2018	2019	2020	2021
Գեղանկարչության առարկաներ	42391	42783	43461	44553	42991
Գծանկարներ	34005	33988	34177	34934	35227
Քանդակներ	3031	3116	3100	3052	3131
Կիրառական արվեստի առարկաներ	44256	44622	44509	45462	51587
Դրամագիտական առարկաներ	192211	191697	192558	192856	196100
Հնագիտական առարկաներ	296436	300554	247826	305318	306466
Կենցաղի և ազգագրական առարկաներ	53949	54997	53084	56210	52551
Լուսանկարներ	493346	501229	358560	511843	517818
Փաստաթղթեր	1581699	1588503	1485205	1602907	1614134
Այլ առարկաներ	195579	327820	339820	343851	337541
Ընդամենը	2936903	3089309	2802300	3140986	3157546

Թանգարանների այցելուների թվաքանակի նվազում արձանագրվել է 2020 թ.՝ պայմանավորված համավարակով: Ցավոք, առանձին չի հաշվառվում, թե թանգարանների այցելուների քանի տոկոսն են ներգնա զբոսաշրջիկները[43]:

Թանգարանների աշխատողների թվաքանակը 2021 թ. կազմել է 2072 մարդ, որից 1664-ը՝ Երևանում[44]:

2021 թ. թանգարանների ֆինանսական մուտքերը կազմել են 5496696.8 հազար դրամ, որից 3458676.2 հազարը՝ ՀՀ պետական և համայնքային բյուջեներից, իսկ ֆինանսական ծախսերը կազմել են 5014810.4 հազար դրամ, որից 3030534.2 հազարը եղել են աշխատավարձի և դրան

ԱՂՅՈՒՍԱԿ 5

Թանգարանների այցելուների թվաքանակն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2019-2021 թթ., մարդ[45]

Վայրը	2019 թ.			2020 թ.			2021 թ.		
	Այցելուների թվաքանակը	Այդ թվում՝		Այցելուների թվաքանակը	Այդ թվում՝		Այցելուների թվաքանակը	Այդ թվում՝	
	ընդամենը	վճարովի	անվճար	ընդամենը	վճարովի	անվճար	ընդամենը	վճարովի	անվճար
ք. Երևան	2093821	509897	1583924	657615	196815	460800	2111305	648367	1462938
Արագածոտն	11000	-	11000	1287	1287	-	13049	4590	8459
Արարատ	25870	10939	14931	2779	866	1913	9050	866	8184
Արմավիր	38569	26946	11623	3377	2756	621	29902	21643	8259
Գեղարքունիք	5116	2283	2833	2444	48	2396	2903	360	2543
Լոռի	54035	25196	28839	6610	4125	2485	78255	37539	40716
Կոտայք	17170	9458	7712	7897	3697	4200	15425	7560	7865
Շիրակ	85110	34828	50282	15618	10717	4901	115738	104156	11582
Սյունիք	18488	5802	12686	1973	586	1387	11647	778	10869
Վայոց ձոր	3159	280	2879	175	81	94	2701	312	2389
Տավուշ	13777	5002	8775	4400	1813	2587	12342	5498	6844
Ընդամենը՝ ՀՀ	**2366115**	**630631**	**1735484**	**704175**	**222791**	**481384**	**2402317**	**831669**	**1570648**

[42] Թանգարանների ֆոնդերի քանակն ըստ ցուցանմուշների և ըստ տարիների, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__2%20Population%20and%20social%20processes__21%20Culture__212%20Museum%20activities/ps-cl-nm03.px/table/tableViewLayout2/?rxid=29c8fec1-5a8c-4601-91b6-31b1b853abe8

[43] Թովմասյան Գ., ՀՀ մշակութային ժառանգությունը՝ որպես զբոսաշրջության զարգացման կարևոր գործոն, «Ամբերդ» տեղեկագիր, 2021/2, էջ 34-41, DOI: 10.52174/2579-2989_2021_2_34,
Թովմասյան Գ., Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (մենագրություն). - Երևան: Մեկնարկ ՍՊԸ, 2020, էջ 156-167:

[44] Թանգարաններ, https://www.yerevan.am/hy/allmuseums/museums-of-yerevan/

[45] ՀՀ սոցիալական վիճակը 2019 թ., էջ 587-588, https://www.armstat.am/file/article/soc_vich_2019_25.pdf,
ՀՀ սոցիալական վիճակը 2020 թ., էջ 577-578, https://www.armstat.am/file/article/soc_vich_2020_24.pdf,
ՀՀ սոցիալական վիճակը 2021 թ., էջ 289, https://armstat.am/file/article/soc_sit_2021_24.pdf

հավասարեցված վճարումների գծով ծախսերը[46]:

Երևանի թանգարանների վերաբերյալ ամփոփ տեղեկություններ առկա են Երևանի քաղաքապետարանի կայքէջում[47]:

1977 թ.-ից սկսած՝ Թանգարանների միջազգային խորհրդի որոշմամբ մայիսի 18-ն ամբողջ աշխարհում նշվում է որպես Թանգարանների միջազգային օր[48]: Թանգարանային գիշեր միջոցառումն առաջին անգամ անցկացվել է Բեռլինում՝ 1997 թ.: Այն նշվում է մայիսի երրորդ շաբաթ օրը: Հայաստանի թանգարաններում ևս այդ օրերին կազմակերպվում են միջացառումներ:

ՀՀ-ում թանգարանային զբոսաշրջության զարգացման համար կարևորվում է հետևյալ քայլերի իրագործումը.

- թանգարաններում վիճակագրության վարում, որը թույլ կտա դասակարգել այցելուներին՝ ըստ ծագման երկրի, սեռի, տարիքի, և որի արդյունքում թանգարանները կարող են իրականացնել թիրախավորված մարքեթինգ,
- թվային, սոցիալական մեդիա, բերանացի և ինֆլյուենսեր մարքեթինգի գործիքակազմի կիրառում թանգարանների կողմից, որի մասին խոսվել է վերևում,
- անդամակցության ծրագրերի և զեղչային քաղաքականության կիրառում,
- տարբեր միջոցառումների կազմակերպում,
- թանգարանների ներառում զբոսաշրջային տուրերում,
- առցանց (վիրտուալ) տուրերի կազմակերպում և այլն:

[46] ՀՀ սոցիալական վիճակը 2021 թ., էջ 290-291, https://armstat.am/file/article/soc_sit_2021_24.pdf
[47] Մշակույթ, https://www.yerevan.am/hy/allmuseums/museums-of-yerevan/
[48] International museum day, https://imd.icom.museum/what-is-imd/imd-in-short/#

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թանգարաններ, https://www.yerevan.am/hy/allmuseums/museums-of-yerevan/
2. Թանգարանների ֆոնդերի քանակն ըստ ցուցանմուշների և ըստ տարիների, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__2%20Population%20and%20social%20processes__21%20Culture__212%20Museum%20activities/ps-cl-nm03.px/table/tableViewLayout2/?rxid=29c8fec1-5a8c-4601-91b6-31b1b853abe8
3. Թովմասյան Գ., ՀՀ մշակութային ժառանգությունը՝ որպես զբոսաշրջության զարգացման կարևոր գործոն, «Ամբերդ» տեղեկագիր, 2021/2, էջ 34-41, DOI: 10.52174/2579-2989_2021_2_34:
4. Թովմասյան Գ., Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (մենագրություն), Երևան: Մեկնարկ ՍՊԸ, 2020, 622 էջ:
5. Թովմասյան Գ., Վիրտուալ զբոսաշրջություն. ճանապարհորդիր՝ տանը նստած, «Ամբերդ» տեղեկագիր, 2022/3, էջ 136-143, DOI: 10.52174/2579-2989_2022.3-136:
6. ՀՀ սոցիալական վիճակը 2019 թ., https://www.armstat.am/file/article/soc_vich_2019_25.pdf
7. ՀՀ սոցիալական վիճակը 2020 թ., https://www.armstat.am/file/article/soc_vich_2020_24.pdf
8. ՀՀ սոցիալական վիճակը 2021 թ., https://armstat.am/file/article/soc_sit_2021_24.pdf
9. Մշակույթ, https://www.yerevan.am/hy/allmuseums/museums-of-yerevan/
10. Admission to the Musée d'Orsay, https://billetterie.musee-orsay.fr/en-GB/products?famille=1933737738230400130
11. Admission Tickets, https://engage.metmuseum.org/admission/?promocode=48946
12. Biglietti di ingresso - Musei Vaticani e Cappella Sistina, https://tickets.museivaticani.va/home/fromtag/1/1675800000000/Biglietti-Musei
13. British Museum, https://www.britishmuseum.org/
14. Cup Noodles Museum, https://www.cupnoodles-museum.jp/en/osaka_ikeda/
15. El Museo del Oro, https://www.banrepcultural.org/bogota/museo-del-oro
16. Falk, J.H. (2016). Museum Audiences:

A Visitor-Centered Perspective, Loisir et Société/Leisure and Society, 39(3), 357-370, https://www.instituteforlearninginnovation.org/wp-content/uploads/2019/10/Falk-Museum-Audiences.pdf
17. How many visitors do museums get daily?, https://www.arnabontempsmuseum.com/how-many-visitors-do-museums-get-daily-2/
18. Identity and the Museum Visitor Experience, https://jewishmuseummd.org/intern-weekly-response-identity-and-the-museum-visitor-experience/
19. International museum day, https://imd.icom.museum/what-is-imd/imd-in-short/#
20. Leading museums by highest attendance worldwide 2019-2021, https://www.statista.com/statistics/901072/museums-by-total-attendance-worldwide/
21. Leading countries worldwide with the highest number of museums 2021, https://www.statista.com/statistics/1201825/top-countries-by-number-of-museums-worldwide/
22. Lindt Home of Chocolate, https://www.lindt-home-of-chocolate.com/en/
23. Louvre Museum, https://www.ticketlouvre.fr/louvre/b2c/index.cfm/calendar/eventCode/MusWeb
24. Madame Tussauds, https://www.madametussauds.com/
25. Methodology For Our List of the Best Museums, https://worldcitiesranking.com/methodology-criteria-museums/
26. Museo Subacuatico de Arte, https://musamexico.org/
27. Museo de las Momias de Guanajuato, http://www.momiasdeguanajuato.gob.mx/index.html
28. Museums Audience Report, 2018, pp. 1-16, https://www.theaudienceagency.org/asset/1995
29. Museum Definition, https://icom.museum/en/resources/standards-guidelines/museum-definition/
30. Museums Tourism Market Outlook (2022-2032), https://www.futuremarketinsights.com/reports/museum-tourism-sector-overview
31. Museum sector enjoyed growing numbers of visitors in 2021, https://blooloop.com/museum/news/museum-sector-covid-attendance-recovery-2021/
32. Mouth to mouth, https://www.micropia.nl/en/discover/stories/mouth-mouth/
33. National Gallery of Art, https://www.nga.gov/visit.html
34. Official tickets fares of the Uffizi Galleries, https://www.uffizi.it/en/pages/tickets-fares
35. Purchase of Online Tickets, https://www.hermitagemuseum.org/wps/portal/hermitage/tickets
36. Romano A., These 12 Famous Museums Offer Virtual Tours You Can Take on Your Couch, https://www.travelandleisure.com/attractions/museums-galleries/museums-with-virtual-tours
37. Spy Museum, https://www.spymuseum.org/?_ga=2.159543096.486771450.1675072882-830071564.1675072882
38. The Dog Collar museum, https://leeds-castle.com/attraction/dog-collar-museum/
39. The Egyptian Museum, https://egymonuments.gov.eg/en/museums/egyptian-museum
40. The Museum of Bread Culture, https://museumbrotundkunst.de/en
41. The Museum of Broken Relationships, https://brokenships.com/explore
42. Virtual tours, Enjoy the Louvre at home!, https://www.louvre.fr/en/online-tours#virtual-tours
43. Welcome to the Museo del Prado, https://www.museodelprado.es/en/visit-the-museum
44. 60 Best Museums in the World, https://worldcitiesranking.com/best-museums-in-the-world/
45. 7.8 million visitors to the Musée du Louvre in 2022, https://presse.louvre.fr/7-8-million-visitors-to-the-musee-du-louvre-in-2022/
46. 10 Of The Most Unique Museums Around The World, https://www.tatlerasia.com/lifestyle/travel/hk-unique-museums-around-the-world
47. 10 tips to increase visitors to your museum, https://www.softplay.com/blog/10-tips-to-increase-visitors-to-your-museum/

Гаяне ТОВМАСЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ,
кандидат экономических наук, доцент

РЫНКИ И КОНКУРЕНЦИЯ

ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ МУЗЕЙНОГО ТУРИЗМА В МИРЕ И В АРМЕНИИ

Музейный туризм – вид культурного туризма, при котором туристы посещают музеи с целью ознакомления с определенными ценностями историко-культурного наследия. Рынок музейного туризма в 2022 году оценивается в 20 миллиардов долларов США. По данным ЮНЕСКО, в настоящее время общее количество музеев в мире составляет около 104 тысяч, наибольшее количество музеев находится в США - 33 082 музея. Среди лучших музеев мира: Лувр, Метрополитен-музей, Эрмитаж, музеи Ватикана, Галерея Уффици, Орсе, Прадо, Британский музей и другие. В данной статье представлены лучшие музеи мира, а также уникальные музеи, типы посетителей музеев, тенденции развития музейного туризма в мире за последние годы, основные маркетинговые инструменты, используемые музеями для привлечения посетителей. Также был проанализирован музейный сектор РА и отмечены необходимые шаги для развития музейного туризма.

Ключевые слова: *музей, музейный туризм, посетитель, произведение искусства, маркетинг*

Gayane TOVMASYAN
Senior Researcher at «Amberd» Research Center, ASUE,
PhD in Economics, Associate Professor

MARKETS AND COMPETITION

MUSEUM TOURISM DEVELOPMENT TRENDS IN THE WORLD AND IN ARMENIA

Museum tourism is a type of cultural tourism whereby tourists visit museums to get acquainted with certain values of historical and cultural heritage. Museum tourism market estimated at 20 billion US dollars in 2022. According to UNESCO, currently there are approximately 104,000 museums in the world, with the largest number of museums being located in the USA, totaling 33,082 museums. Among the best museums in the world are: Louvre, Metropolitan Museum of Art, Hermitage, Vatican Museums, Uffizi Gallery, Orsay, Prado, British Museum, and others. This paper presents the world's best museums, as well as unique museums, types of museum visitors, museum tourism development trends in the world in recent years, the main marketing tools used by museums to attract visitors. The analysis extends to the museum sector in the RA offering insights into necessary steps for the development of museum tourism.

Keywords: *museum, museum tourism, visitor, artwork, marketing*